**Ձև N3**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 33

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Օրգով բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Օրգով բնակավայրի մասով) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օրգով բնակավայրի Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 02-114-0118-0001 կադաստրային ծածկագրով 1.42206 հա մակերեսով հողամասը հատուկ պահպանվող տարածքների հողերի՝ պատմական և մշակութային հողեր և 02-114-0118-0002 կադաստրային ծածկագրով 1.60942 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող | 02-114-0118-0001 կադաստրային ծածկագրով 1.42206 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր և 02-114-0118-0002 կադաստրային ծածկագրով 1.60942 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների հողերի՝ պատմական և մշակութային հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Օրգով բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օրգով բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող՝* | | |
| | | Դ. Գրիգորյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, «26» «հունվարի» 2024թ.